

3293

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

XVII

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ի.Ս Տ Ա Լ Ի Ն

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄ
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
ՀԱՄ.ԿԿ/Բ/ԿԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐԻՆ

3K33

2-32

ԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ 1934

22 JUN 2005

3K33 40 47.
Z-320

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

09 DEC 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XV/11 ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

5376

42206



05 AUG 2013

3293

Հայերենի խմբագրեց — Ա. ԲԱՆԴՈՒՄՅԱՆ

Սրբագրիչ — Ա. ԱՐԵՆՅԱՆ

Տեխ. խմբագիր — Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության — 2-ին փետրվարի

Ստորագրված է տպագրելու — 13-ին փետրվարի

Տպագրական քերթերի քիվը — 5½

Տպագրական նշանների քիվը — 265072



Тип. „3-й Интернационал“.

Главлит—776.

Заказ № 523.

Тираж—5.000.

Паргиздат № 156.

ФСИА



I.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇԵՐՈՒՆԱԿԱՎՈՂ ԺՖՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԿԵՐՆԵՐ!

16-րդ համադրումարից հետո անցել և ավելի քան յերեք տարի:

Այդ ժամանակաշրջանն այնքան էլ յերկար չէ: Սակայն նա բովանդակութեամբ հաղեցված և ավելի, քան վորսե մեկ ուրիշ ժամանակաշրջան: Յեա կարծում եմ, վոր վերջին տասնամյակի շրջաններից և վոչ մեկն այնքան հարուստ չի յեղել անցքերով, քան այս ժամանակաշրջանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ բնագավառում այս տարիները յեղել են համաշխարհային տնտեսական ճգնաժամի շարունակվող տարիներ: Ճգնաժամն ընդգրկեց վոչ միայն արդյունաբերությունը, այլև գյուղատնտեսությունն ամբողջապես: Ճգնաժամը փոթորկվել և վոչ միայն արտադրության, այլև առևտրի բնագավառում: Նա տեղափոխվել և նաև վարկի ու դրամական շրջանառության բնագավառը՝ դիսկոնտոյի շուտ տալով յերկրների միջև սահմանված վարկային ու վալյուտային հարաբերությունները: Յեթե առաջ ներում վորսե տեղ վիճում էր, թե կա արդյո՞ք համաշխարհային ճգնաժամ թե վոչ, ապա այժմ այդ մասին այլևս չեն վիճում: Վորովհետև միանգամայն ակնհայտ է ճգնաժամի առկայությունն ու նրա ավերիչ ներգործությունը: Ներկայումս արդեն վիճում են ուրիշ բանի մասին՝ կարելի չե արդյո՞ք դուրս գալ ճգնաժամից, թե յեղ չկա, իսկ յեթե յեղ կա—ապա ի՞նչպես կենսագործել այն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ բնագավառում այդ տարիները յեղել են ինչպես հատկապես յերկրների, այնպես էլ նրանց ներսում հարաբերությունների հետագա սրման տարիներ: Ծաղոնիտյի

պատերազմը Չինաստանի դեմ, Մանջուրիայի դրավումը, վորոնք սրեցին հարաբերությունները Հեռավոր Արևելքում. ֆաշիզմի հաղթանակը Գերմանիայում և ուկրաինյի դադարախախտումը, վորոնք սրեցին հարաբերությունները Յևրոպայում, Ճապոնիայի ու Գերմանիայի Ադդերի Լիգայից հեռանալը, վորը նոր թափ հաղորդեց պառտադինումներին ու խմբերի խախտական պատերազմի համար պատրաստվելուն. ֆաշիզմի պարստությունն իսպանիայում, վորը Թի ափերից անդամ ցույց և յուրիս, թե հեղափոխական ճգնաժամը հասունանում և և ֆաշիզմն ամենեին հարստեմ է — աշխարհ ևն հաշվետու ժամանակաշրջանի կարևորագույն փաստերը: Զարմանալի է, վոր բուրժուական պաշտպանները իր հոգեխառն և ապրում, իսկ զինաթափման տեղեկները բացորոշ և ուղղակի փոխարինում են սպառնալիքն ու լրացուցիչ զինման տեղեկներով:

Տնտեսական ցնցումների և ռազմաքաղաքական կատաստրոֆաների այս փոթորկահույզ ալիքների մեջ՝ ԽՍՀՄ վորպես ժայկանալի և առանձին՝ շարունակելով իր սոցիալիստական շինարարությունը դործը և խաղաղության պահպանման համար մրդավոր պայքարը: Յեթե այնուհետև, կապիտալիստական յերկրներում դեռևս փոթորկում և տնտեսական ճգնաժամը, ապա ԽՍՀՄ-ում շարունակվում և վերելքը, ինչպես արդյունաբերության, նույն պես և գյուղատնտեսության ասպարիզում: Յեթե այնուհետև, վատախալիստական յերկրներում, անեղային նախապատրաստությունն և գնում նոր պատերազմի համար, աշխարհի և ազդեցություն չրջանների նոր վերաբաժանման համար, ապա ԽՍՀՄ շարունակում և սխառնատիկ և համառ պայքար պատերազմի փառալի դեմ, խաղաղության համար, և չի կարելի ասել, վոր ԽՍՀՄ-ի ջանքերն աշխարհապարիզում վորեւե հաջողություն չի ունեցել:

Այդպես և ներկա մոմենտում միջազգային դրությունը ընդհանուր պատկերը:

Անցնենք կապիտալիստական յերկրների տնտեսական ու քաղաքական կացությունը վերաբերող հիմնական ափյալների քնննությունը:

1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺՍԻ ԾՄԺՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ներկա տնտեսական ճգնաժամը կապիտալիստական յերկրներում տարբերվում է բոլոր նման ճգնաժամերից ի միջի աշխույ նրանով, վոր նա հանդիսանում է ափյի քան տեսական ու յեր-

կարող: Յեթե առաջնորդ ճգնաժամերը վերջանում էին մեկյերկու տարում, ապա արդի ճգնաժամը շարունակվում է ահա արդեն հինգ տարի՝ տարեց-տարի ափյերկու կապիտալիստական յերկրների տնտեսությունը, ծծելով նրանից նախորդ տարիներում կուտակված ճարպը: Զարմանալի է, վոր այս ճգնաժամը հանդիսանում է բոլոր ճգնաժամերից ամենաժանրը:

Ինչո՞վ բացատրել ժամանակակից արդյունաբերության ճրգնաժամի աշխարհ տնտեսական ճգնաժամի տեսական բնույթը:

Այդ առաջին հերթին բացատրվում է նրանով, վոր արդյունաբերական ճգնաժամն ընդգրկել է առանց բացառության բոլոր կապիտալիստական յերկրները, զգալարացնելով մի շարք յերկրների կողմից ուրիշների հաշվին մանյովրներ անելը:

Այդ բացատրվում է, յերկրորդ՝ նրանով, վոր արդյունաբերական ճգնաժամը հյուսվել է ազրարային ճգնաժամի հետ, վորն առանց բացառության ընդգրկել է բոլոր ազրարային ու կիսաազրարային յերկրները, վորը չէր կարող չզգալարացնել ու չխորացնել արդյունաբերական ճգնաժամը:

Այդ բացատրվում է, յերկրորդ՝ նրանով, վոր ազրարային ճգնաժամն աշխարհ ժամանակամիջոցում ուժեղացել է և ընդգրկել է գյուղատնտեսության բոլոր ճյուղերը, աշխարհում և անասնապահությունը, հասցնելով այն միջև դեղադացիա, միջև մեքենաներից ձեռքի աշխատանքին անցնելը, միջև տրակտորը ձեռով փոխարինելը, արհեստական պարարտանյութերի գործածման խիստ կրճատմանը, իսկ յերբեմն դրանից յիականաբ հրաժարվելը, վորը և ափյի յե ձգձգել արդյունաբերական ճգնաժամը:

Այդ բացատրվում է, չորրորդ, նրանով, վոր արդյունաբերության մեջ տիրապետող մոնոպոլ կարտելները ձգտում են պահպանել ազրանքների բարձր գները, մի հանդամանք, վորը հատկապես հիմնադրվել է դարձնում ճգնաժամը և խանգարում ազրանքային պաշարների սպումմանը:

Վերջապես դա բացատրվում է նրանով — և դա գլխավորն է — վոր արդյունաբերական ճգնաժամը ծավալվել է կապիտալիզմի բնիկառու ճգնաժամի պայմաններում. յերբ կապիտալիզմը վոր գլխավոր պետություններում, վոր դադարում է և վոր էլ կարող յերկրներում հունի արդեն և չի յել կարող ունենալ այն ուժն ու ամրությունը, վոր նա ուներ միջև պատերազմն ու Հոկտեմբերյան հեղափոխությունը, յերբ կապիտալիստական յերկրների արդյունաբերությունն իմպերիալիստական պատերազմից ժառանգություն էր ստացել ձեռնարկների խրոնիքական թե-

բարենաւորումը, և միլիոնավոր գործազուրկների բանակները, վորոնցից նա անդոր և այլևս ազատագրվելու:

Այդպէս են այն հանգամանքները, վորոնք բնորոշում են ներկայիս արդյունաբերական ճգնաժամի խորապես — տեական բնութիւնը:

Այդ իսկ հանգամանքներով և բացասութեամբ նաեւ այն փաստը, վոր ճգնաժամը չի սահմանափակվում արտադրութեան ու առևտրի բնագոյններով, այլև ընդգրկել և նաեւ վարկային սիստեմը, վալյուտան, պարտքային պարտավորութեանների աֆերան և այլն, միջոցով արագիցիոն կերպով սահմանված հարաբերութիւնները, ինչպէս առանձին յերկրների միջև, նույնպէս և առանձին յերկրների սոցիալական խմբերի միջև:

Այստեղ խոշոր դեր և խաղացել ապրանքների դերի անկումը: Չնայած մենաշնորհ վարտելների ընդդիմադրութեանը, դրաների անկումն աճել և տարեբային ուժով, ուր առեւտրից առաջ և առեւտրից շատ ընկել և չկազմակերպված ապրանքատերերի — դրուդայինների, արհեստավորների, մանր կապիտալիստների ապրանքների գները և միայն աստիճանաբար ու ավելի քիչ ընկել են կազմակերպված կարտելներում համախմբված կապիտալիստների — ապրանքատերերի ապրանքների գները: Գների անկումը պարտապանների (արդյունաբերողներ, արհեստավորներ և այլքն) դրութեանն անտանելի դարձրեց, իսկ վարկատուների դրութեանը — չլոված չափերով արտոնյալ: Այդ դրութեանը պետք և հասցներ և հասցրեց ֆիրմաների և առանձին ձեռնարկողների հսկայական սնանկացմանը: Վերջին յերեք տարիների ընթացքում այդ հոդի միւս վոչնչացել են տասնյակ հազարավոր ակցիոններական ընկերութեաններ: ՀԱՄՆ-ում, Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում: Ակցիոններական ընկերութեանների սնանկացմանը հետևեց գալիս և վալյուտայի արժեքագուրկ լինելը, վորը վորոշ չափով հետադարձ պարտապանների դրութեանը: վալյուտայի արժեքագուրկ լինելուն հետևեց պետութեանների կողմից ինչպէս արտաքին, նույնպէս և ներքին պարտքերի չրմամբ ման օրինականացումը: Այնպիսի բանկերի սնանկացումը, ինչպիսիք են Գերմանիայում Դարմշտատի և Դրեզդենի բանկերը, Ավստրիայում Կրեդիտ-Անշտալտ բանկը, այնպիսի կոնցերնների սնանկացումը, ինչպիսիք են Շվեյցարիայում Կրեդիտը և ՀԱՄՆ-ում Ինսուլ-Կոնցերնը և այլն, վորոնք բոլորին հայտնի յեն:

Հասկանալի յե նաեւ վոր վարկային սիստեմի հիմքերը խոր-խորդ ագր յերեւոյթներին պիտի հետևելին և իրոք հետևեցին վարկերի ու տարերկրյա փոխառութեանների վճարումների դա-

դարեցումը, միջաշնակցային պարտքերի վճարումների դադարեցումը, կապիտալի արտահանութեան դադարեցումը, արտաքին առևտրի նոր կրճատումը, արտաքին արտահանման նոր կրճատումը, արտաքին շուկաների համար մոլոր պայքարի ուժեղացումը, յերկրների միջև առևտրական պատերազմը և — դեմպինգ: Այո՛, ընկերներ, դեմպինգ: Յեւ խոսում եմ վոչ թե խորհրդային չեղյալ դեմպինգի, վորի մասին դեռ վերջերս եր, վոր խոսուո ձայնով աղաղակում էին Յեւրոպայի և Ամերիկայի մեծապատիւ պառլամենտների մի քանի մեծապատիւ պատգամավորները: Յեւ խոսում եմ իսկական դեմպինգի մասին, վորը ներկայումս գործադրվում և համարյա բոլոր «քաղաքակրթված» պետութեանների կողմից, վորի մասին խոհեմութեամբ բռնութեան են պահանջում այդ խիղիս ու ազնիւ պատգամավորները:

Հասկանալի յե նաեւ, վոր արդյունաբերական ճգնաժամին ուղեկցող այդ քայքայիչ յերեւոյթները, վոր տեղի յեն ունենում արտադրութեան շրջանից դուրս, չեն կարող իրենց հերթին չաղղել արդյունաբերական ճգնաժամի քնթացքի վրա այն խորացնելու և բարդացնելու խմաստով:

Այդ և արդյունաբերական ճգնաժամի շարժման ընդհանուր պատկերը:

Ահա պաշտոնական տվյալներից մի քանի թվեր, վորոնք ցուցադրում են արդյունաբերական ճգնաժամի շարժումը հաշվետու ժամանակաշրջանում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ՏՈՎՈՍՆԵՐՈՎ 1929 ԹՎԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՐԸ

	1929	1930	1931	1932	1933
ԽՍՀՄ	100,0	129,7	161,9	184,7	201,6
ՀԱՄՆ	100,0	80,7	68,1	53,8	64,9
Անգլիա	100,0	92,4	83,8	83,8	86,1
Գերմանիա	100,0	88,3	71,7	59,8	66,8
Ֆրանսիա	100,0	100,7	89,2	69,1	77,4

Ինչպէս տեսնում եք այս աղյուսակը, ինքն և խոսում իր մասին:

Այն ժամանակ, յերբ հիմնական կապիտալիստական յերկրների արդյունաբերութեանը 1929 թվականի մակարդակի համեմատութեամբ տարեց-տարի ընկել և և միայն 1933 թվին սկսել և

մի քիչ ուղղվել, սակայն 1929 թվականի մակարդակին անգամ չհասնելով, ԽՍՀՄ արդյունաբերությունը տարեց-տարի աճել է անընդհատ վերելքի պրոցեսն ապրելով:

Այն ժամանակ, յերբ հիմնական կապիտալիստական յերկրներին արդյունաբերությունը 1933 թվի վերջին 1929 թվի մակարդակի համեմատությունը յեր արտադրանքի ծավալի կրճատում է ցույց տալիս միջին հաշվով 25 տոկոսով և ավելի, ԽՍՀՄ արդյունաբերությունը այդ ժամանակամիջոցում աճել է ավելի քան յերեւու անգամ, այսինքն ավելի քան 100 տոկոսով (ծափահարություններ):

Դատելով ըստ այդ աղյուսակի, կարող է թվալ, թե չորս կապիտալիստական յերկրներին Անգլիան ամենապատասխար դրություն մեջ է գտնվում: Սակայն դա այնքան էլ ճիշտ չէ: Յեթե վերցնենք այդ յերկրների արդյունաբերությունը և համեմատենք այն մինչպատերազմյան մակարդակի հետ, ապա քիչ այլ պատկեր է ստացվում:

Ահա համապատասխան աղյուսակը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ
ՄԻՆՁՊԱՏԵՐԱՄՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՐԻ

1913 թ. 1929 թ. 1930 թ. 1931 թ. 1932 թ. 1933 թ.

ԽՍՀՄ	— 100,0	194,3	252,1	314,7	359,0	391,9
ՀԱՄԵՆ	— 100,0	170,2	137,3	115,9	91,4	110,2
Անգլիա	— 100,0	99,1	91,5	83,0	82,5	85,2
Գերմանիա	— 100,0	113,0	99,8	81,0	67,6	75,4
Ֆրանսիա	— 100,0	139,0	140,0	124,0	96,1	107,6

Ինչպես տեսնում եք, Անգլիայի և Գերմանիայի արդյունաբերությունը դեռևս մինչպատերազմյան մակարդակին չի հասել, մինչդեռ ՀԱՄԵՆ ու Ֆրանսիան բարձրացրել են վերջինից մի քանի տոկոսներով, իսկ ԽՍՀՄ այդ ժամանակամիջոցում ամբողջ յեր արդյունաբերական արտադրանքը բարձրացրել, ավելացրել է մինչպատերազմյան մակարդակի համեմատությունը ավելի քան 290 տոկոսով (ծափահարություններ):

Բայց այս աղյուսակներից բխում է մի յեղրակացություն ևս:

Այն ժամանակ, յերբ հիմնական կապիտալիստական յերկրներին արդյունաբերությունը սկսած 1930 թ. և առանձնապես 1931 թվից ամբողջ ժամանակ ընկել է, 1932 թ. հատկապես անկման ամենաբարձր կետին, — 1933 թվին արդյունաբերությունը յերկրս է մի քիչ կազդուրվել և բարձրանալ:

Յեթե վերցնենք 1932 և 1933 թվականների ամսական տվյալներն էլ ավելի յեն հաստատում այդ յեղրակացությունը, վորոհհետև նրանք վկայում են այն մասին, վոր այդ յերկրների արդյունաբերությունը, չնայած 1933 թվի ընթացքում նրա արտադրանքի տատանումներին, տեղեկեցներ չի հայտնաբերել տատանումները հասցնելու 1932 թ. ամսական ընթացքում տեղի ունեցած ամենաբարձր անկման մակարդակին:

Ի՞նչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, վոր հիմնական կապիտալիստական յերկրներին արդյունաբերությունը, ըստ յերեւույթին, արդեն ամենաբարձր անկման կետն անցել է, վորին նա 1933 թվի ընթացքում այլևս չի վերադարձել:

Վստանք հակված են այդ յերեւույթը վերադրելու բացառապես արհեստական գործոնների — ինչպես որինակ ռադամ-ինֆլացիան կոնյունկտուրային: Կասկած չի կարող յինել, վոր այստեղ ռադամ-ինֆլացիոն կոնյունկտուրան վորք դեր չի խաղում: Այդ ճիշտ է մանավանդ ծաղոնիայի վերաբերմամբ, վոր տեղ այդ արհեստական գործոնը հանդիսանում է արդյունաբերության վորոշ, գլխավորապես, ռադամական ճյուղերի վորոշ աշխուժացման գլխավոր և վճռական ուժը: Բայց կոպիտ սխալ կլիներ ամենը բացատրել ռադամ-ինֆլացիոն կոնյունկտուրայով: Այդպիսի բացատրությունը սխալ է թեկուզ հենց նրա համար, վոր արդյունաբերության մեջ յե կողմից յնույթադրված վորոշ տեղաշարժերը նկատվում են վոր թե առանձին և պատահական ուսյոններում, այլ բոլոր, կամ համարյա բոլոր արդյունաբերական յերկրներում, այդ թվում և կայուն վայրատա ունեցող յերկրներում: Ակներե և, վոր ռադամ-ինֆլացիոն կոնյունկտուրային գուղընթաց այստեղ գործում են նաև կապիտալիզմի ներքին տնտեսական ուժերը:

Կապիտալիզմին հաջորդից վորոշ չափով թեթևացնել արդյունաբերության գրությունը բանվորների հաշվին նրանց շահա գործումը խորացնելով, աշխատանքի յնտեսիվություն ուժեղացնելու ճանապարհով, փերմերների հաշվին — նրանց աշխատանքի արտադրանքի, պարենամթերքի և մասամբ հումքի վրա ավելի ծանր գներ նշանակելու քաղաքականությունը անցկացնելու ճանապարհով, գաղութների գյուղացիների և տնտեսապես բույլ յերկրների հաշվին — նրանց աշխատանքի արդյունքների, գլխավորապես հումքի և հետո պարենի գներն էլ ավելի յնեցնելու ճանապարհով:

Նշանակում է արդյո՞ք այս, վոր մենք գործ ունենք ճգնա-

ժամի սովորական դեպրեսիայի անցման հետ, վորը բերում է իր հետ արդյունաբերութեան ծաղկում ու նոր վերելք: Վաճձի նշանակում: Ներկայումս, համենայն դեպս, գոյություն չունեն անհույսի ամբողջությունը, ուղղակի կամ անուղղակի, վորոնք անգին կապիտալիստական յերկրներում արդյունաբերութեան վերելքի մասին: Դեռ ավելին—այս բոլորի հիման վրա մոտակա ժամանակներս, համենայն դեպս, այդպիսի ամբողջություն չեն ել կարող լինել: Չեն կարող լինել, քանի վոր շարունակում են գործել բոլոր այն աննպաստ պայմանները, վորոնք կապիտալիստական յերկրների արդյունաբերութեանը թույլ չեն տալիս քիչ թե շատ լուրջ վեր բարձրանալու: Մոտքը կապիտալիզմի շարունակ վող ընդհանուր ճգնաժամի մասին է, վորի պայմաններում տեղի չե ունենում տնտեսական ճգնաժամը, խոսքը ձեռնարկութեանների խրոնիկական թերաբեռնություն, խրոնիկական մաս սալական գործադրկություն, արդյունաբերական ճգնաժամը գյուղատնտեսական ճգնաժամի հետ հյուսվելու, հիմնական կապիտալի քիչ թե շատ լուրջ նորացման տենդենցի, վորը սովորաբար վերելքի գալիքն է նախագուշակում, բացակայություն մասին է և այլն և այլն:

Այնքան է, վոր մենք գործ ունենք արդյունաբերութեան ամենամեծ անկման կետից, արդյունաբերական ճգնաժամի ամենամեծ խորություն կետից դեպի դեպրեսիայի անցման հետ, բայց վոչ թե սովորական դեպրեսիայի, այլ մի առանձնահատուկ դեպրեսիայի, վորն արդյունաբերութեան նոր ծաղկման ու վերելքը չի տանում, բայց և չի վերադարձնում նրան ամենամեծ անկման կետին:

2. ԳԱՂԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՍՐՈՒՄԸ ԿՍԴԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Յերկարածից տնտեսական ճգնաժամի հետևանքով տեղծվել է կապիտալիստական յերկրներում մինչև այժմ չտեսնված քաղաքական դրություն որում թե այդ յերկրների ներքում և թե նրանց միջև:

Արտաքին շուկաների համար մղվող պայքարի ուժեղացումը, ազատ առևտրի վերջին մնացորդների վաճառումը, մաքսային արգելիչ տուրքերը, առևտրական պատերազմը, վալյուտաների պատերազմը, ղեկավարող և նման ուրիշ շատ միջոցառումները, վորոնք դրանքում են ծալրահեղ հացիոնալիզմ արտադրական քաղաքականության մեջ, — ծալր անտիճան սրել են յերկրների միջև յեղած փոխհարաբերությունները, հող են բու-

տեղծել ստորակառույց ընդհարումների համար և հերթի յեն դրել պատերազմը, վորպես աշխարհի և աղբեղություն չլծանների նոր վերաբաժանման միջոց՝ ավելի ուժեղ պետությունների ոգտին:

Ճապոնիայի պատերազմը Չինաստանի դեմ, Մանջուրիայի բռնագրավումը, Ճապոնիայի դուրս գալն Ադրերի Լիգայից և առաջնադասումը դեպի Հյուսիսային Չինաստան — ավելի ևս սրել են դրությունը: Մեծ ովկիանոսի համար մղվող պայքարի ուժեղացումը և Ճապոնիայի, Միացյալ Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի ստորադասության պատասպանությունները աճը—հանդիսանում են այդ սրման հետևանքը:

Գերմանիայի դուրս գալն Ադրերի Լիգայից և ռեվանշի ուրվականը նոր խթան են հանդիսացել դրություն սրմանը և սղառադինումների աճմանը Յեվրոպայում:

Ջաբանալի չե, վոր բուրժուական պայթիքից այժմ իր վողարկելի դրությունն է քարշ տալիս, իսկ զինաթափման մասին դատարկախոսությունը փոխարինում են հզորման և խոսակցությունները՝ սպառազինման և յրացուցիչ զինման մասին:

Դարձյալ, ինչպես 1914 թ., առաջին պլանն են դուրս գալիս սղադական լծակերիալիզմի կուսակցությունները, պատերազմի և ռեվանշի կուսակցությունները:

Գործը բացահայտորեն գնում է դեպի նոր պատերազմ:

Միևնույն գործոնների աղբեղություն չնորհիվ ավելի ևս սրվում է կապիտալիստական յերկրների ներքին դրությունը: Արդյունաբերական ճգնաժամի չորս տարիները հյուծել և հիասթափություն են հասցրել բանվոր դասակարգին: Գյուղատնտեսական ճգնաժամի չորս տարիները վերջնականապես քայքայել են գյուղացիության չունեոր խավերին՝ վոչ միայն հիմնական կապիտալիստական յերկրներում, այլև, առանձնապես, կախած և գաղութային յերկրներում: Փաստ է, վոր չնայած վիճակագրական բոլոր խարդախություններին, — վորոնք նպատակ ունեն նախկինից գործադուրկների թիվը, — գործադուրկների քանակը՝ բուրժուական հիմնարկների պաշտոնական ամբողջությամբ հասնում է Անգլիայում—3 միլիոնի, Գերմանիայում—5 միլիոնի, Միացյալ Նահանգներում—10 միլիոնի, ել չիտսելով Յեվրոպայի մյուս յերկրների մասին: Դրան ավելացրեք մասնակի գործադուրկներին, վորոնց քանակը տասնյակ միլիոններից ավելի չե, ավելացրեք քայքայված գյուղացիների միլիոնավոր մասսաներին, — և դուր աշխատավոր մասսաների կարիքի և

Հոստահատութեան միտաւոր պատկերը կատանաք: ժողովրդական մասսաները գեռնա չեն հասել նրան, միւր գրոհեն կապիտալիզմը, բայց միւր գրոհի գաղափարը հասունանում է մասսաների գիտակցութեան մէջ՝ դրա մասին հաղթի թէ կատանել կարող է իննել: Այդ մասին պերճութեամբ կերպով վկայում են թեկուզ այնպիսի փաստերը, ինչպէս, իսպանական հեղափոխութեանը, միւրը տապալել է Փաշիպի ուսիւթը, և Չինաստանի խորհրդային ռալոններէ աճը, միւրին անկարող է կանգնեցնել չինական և ուտարեկըրյա բուրժուազիայի միացյալ հակահեղափոխութեանը:

Դրանով և և բացատրւում այն փաստը, միւր կապիտալիստական յերկրներէ տիրապետող դասակարգերը ջանասիրութեամբ մոռնալանում կամ մոռնելի յեն հալատարեցնում պառլամենտալիզմի և բուրժուական դեմոկրատիայի վերջին մնացորդները, միւրոնց կարող է ոգտագործել բանվոր դասակարգը ճնշողներէ դեմ մղած իրեն պայքարում: Բնդհատակն են քշում կոմունիստական կուսակցութեաններին և անցնում են իրենց զիկտատութեայի պահպանման բացարձակ — տերորիստական մեթոդներին:

Շովինիզմ և պատերազմի նախապատրաստումը միւրպէս արտաքին քաղաքականութեան հիմնական տարրեր, բանվոր դասակարգի սանձահարում և տերոր ներքին քաղաքականութեան արտադրութեամբ, միւրպէս անհրաժեշտ միջոց արագա ռադմանակատներէ թիկունքի ամրապնդման — ահա թէ ինչն և առանձնապէս զրադեցնում այժմ ժամանակակից իմպերիալիստական քաղաքականութեան: Զարմանալի չէ, միւր Փաշիպի այժմ դարձել է ամենամոգայտական ասլրանքը բուրժուական ռադմատենչ քաղաքականութեան մէջ: Յետ խոսում եմ միւր միայն Փաշիպի մասին ընդհանրապէս, այլ ամենից առաջ գերմանական տիպի Փաշիպի մասին, միւրը սխալ կերպով կոչւում է նացիոնալ-սոցիալիզմ, միւրը միւրեւեմ ամենամանրազննին ծանոթութեան դեպքում անդամ անկարելի յէ յերեան հանել նրա մէջ սոցիալիզմի մինչև իսկ միատոմ:

Այդ կապակցութեամբ Փաշիպի հաղթանակը Գերմանիայում պետք է հասկանալ միւր միայն իրեն քանվոր դասակարգի թուլութեան նշան և սոցիալ-դեմոկրատիայի կողմից բանվոր դասակարգին դալամանելու արդեւոնք, միւրը հարթել է Փաշիպի ճանապարհը: Այն պետք է հասկանալ նաեւ, իրեն բուրժուազիայի թուլութեան նշան, իրեն նշան այն բանի, միւր բուրժուազիան այլևս ուժ չունի պարլամենտարիզմի ու բուրժուական դեմոկրատիայի հին մեթոդներով իշխելու, միւրի պատճառով և

նա տիրալծած և ներքին քաղաքականութեան մէջ դիմել կատալարման տերորիստական մեթոդներին — իրեն նշան այն բանի, միւր նա այլևս անգոր և ներկա դրութեանից խաղաղ արտաքին քաղաքականութեան հիման վրա դուրս գալու, միւրի պատճառով և նա տիրալծած և պատերազմի քաղաքականութեանը դիմելու:

Այսպէս և դրութեանը:

Ինչպէս տեսնում եք, գործը գնում է դեպի նոր իմպերիալիստական պատերազմ, իրեն յիւր ներկա դրութեանից:

Իհարկէ, հիմք չկա յենթադրելու, թէ պատերազմն իսկական յիւր կտա: Ընդհակառակը, նա պետք է ևլ ալիւլի խճճի դրութեանը: Դեռ ալիւլին, նա անկասկած հեղափոխութեանը գրադող ուժերը կրացի և հարցականի տակ կընի կապիտալիզմի դրութեանը մէ շարք յերկրներում, ինչպէս այդ տեղի ունեցում առաջին իմպերիալիստական պատերազմի բնթացքում: Յետ յիւթէ, չնայած առաջին իմպերիալիստական պատերազմի փորձին, բուրժուական քաղաքականներն այնուամենայնիւ պատերազմին են ձեռք մեկնում, ինչպէս իսկողմողը դարմանին, ապա արդ նշա նակում է, միւր նրանք վերջնականապէս չփոթւիւլ են, ընկել են փակուղու մէջ — և պատրաստ են դիսակորույս անդունդը նետմիւլու:

Այդ պատճառով ևլ չի խանգարի, յիւթէ համառոտակի նալինք պատերազմի կադմակերպման այն պլանները, միւրոնք սրնվում են այժմ բուրժուական քաղաքականների շրջանում:

Վոմանք կարծում են, թէ պատերազմ պետք է կադմակերպել մեծ պետութեաններէ մեկի դեմ: Նրանք մտածում են նրան կործանիչ պարտութեան հասցնել և նրա հալվին կարգի բերել իրենց գործերը: Ասենք, թէ նրանք կադմակերպեցին այդպիսի պատերազմ: Ի՞նչ կատացվի դրանից: Ինչպէս հայտնի յէ, առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ ևլ ցանկացան մոռնալանել մեծ պետութեաններից մեկին — Գերմանիային և հարստանալ նրա հալվին: Իսկ ի՞նչ ստացվեց դրանից: Գերմանիան նրանք չմոռնալանել, բայց Գերմանիայում այնպիսի տոնլութեան սերմանեցին դեպի հաղթողները և ուկլանչի այնպիսի հարուստ հող ստեղծեցին, միւր մինչև այսոր ևլ դեռ չեն կարող դանում, և թերես դեռ չուտ ևլ չեն կարող ուտել այն զղղելի ճաշը, միւր հենց իրենք յեկեցին: Բայց դրա փոխարեն նրանք Ռուսաստանի կապիտալիզմի կործանումը, պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը ստացան Ռուսաստանում և պարդ և — Սորհրդային Միութեանը: Վորտե՞ղ և յերաշխիքը, միւր

յերկրորդ. խմբերի ալիստական պատերազմը նրանց կտա ալիքի «բալ» արդյունքներ, քան առաջինը: Ճիշտ է՞ր լինի հակառակը յենթադրելը:

Մյուսները կարծում են, թե պատերազմ պետք է կազմակերպել ռազմական անասկետից թույլ, բայց շուկայի տեսակետից ընդարձակ յերկրներից մեկի դեմ — ինչպիսինն է Չինաստանը, վորը թվում է, թե չի յել կարելի պետութուն անվանել բառիս բուն իմաստով, այլ ներկայացնում է իրենից «անկազմակերպ մի տերիտորիա», վորը կարելի ունի, վորպեսզի նրան բռնազբաղեն ուժեղ պետութունները: Նրանք ցանկանում են, ինչպես յերևում է, մերջնականապես բաժան բաժանել նրան կարգի բերել իրենց գործերը նրա հաշվին: Ասենք, թե նրանք կազմակերպեցին այդպիսի պատերազմ: Ի՞նչ կարող է դուրս գալ դրանից: Հայտնի չէ, վոր ԼԳ-ը դարիսկրքին ճիշտ այնպես են նա յել Խաղաղայի և Գերմանիայի վրա, ինչպես նախում են այժմ Չինաստանի վրա, այսինքն նրանց «անկազմակերպ տերիտորիաներ» են համարել և վոչ թե պետութուններ, ու սորկացրել են նրանց: Իսկ ի՞նչ է ստացվել դրանից: Դրանից, ինչպես հայտնի չէ, ստացվել են Գերմանիայի և Խաղաղայի պատերազմներն անկախության համար և այդ յերկրների միացումն իրեն ինքնուրույն պետութուններ: Դրանից այդ յերկրների ժողովուրդների սրտերում ուժեղացել է ատելութունը դեպի սորկացնողները, վորի հետևանքը միջև այժմ դեռևս վերացված չեն և, թերևս, յերկար ժամանակ չեն վերացվի: Հարց է ծագում. ի՞նչով կարելի չէ յերաշխայվորել, վոր նույնը չի ստացվի Չինաստանի դեմ խմբերիստների մղած պատերազմի հետևանքով:

Յերրորդները կարծում են, թե պատերազմ պետք է կազմակերպել «բարձր ցեղը», ասենք գերմանական «ցեղը», «ցածր ցեղի» դեմ, ամենից առաջ, — սլավոնների դեմ, վոր միայն այդպիսի պատերազմը կարող է յելք առաջ գրութունից, քանի վոր «բարձր ցեղը» կոչված է «ցածրին» բեղմնավորելու և նրա վրա իշխելու: Յենթադրենք, թե այդ տարրինակ թեոբիան, վորը ևս գիտութունից հեռու չէ այնպես, ինչպես յերկինքը յերկրից, — յենթադրենք, թե այդ տարրինակ թեոբիան վերածեցին պրակտիկայի: Ի՞նչ կարող է ստացվել դրանից: Հայտնի չէ, վոր հին Հռոմը ճիշտ նույնպես է նայել ներկայիս գերմանացիների և Ֆրանսիացիների նախնիներին, ինչպես ներկայումս «բարձր ցեղի» ներկայացուցիչներն են նայում սլավոնական ցեղին: Հայտնի չէ, վոր հին Հռոմը նրանց արհամարել

ե «ցածր ցեղ», «բարբարոսներ» անվանելով, վորոնք դատապարտված են յեղել հավիտենականապես «բարձր ցեղին», «Մեծ Հռոմին» ստորադաս լինելու, իմիջի ալյոց, մեր մեջ առած, — հին Հռոմը դրա համար վորոչ հիմք ունի, մի բան վոր չի կարելի ասել ներկայիս «բարձր ցեղի» ներկայացուցիչների մասին (ծափերի տալիս): Իսկ ի՞նչ է դուրս յեկել դրանից: Դուրս է յեկել այն, վոր վոչ հռոմացիները, այսինքն բոլոր «բարբարոսները» միացել են ընդհանուր թշնամու դեմ և զորդյունով տապալել են Հռոմը: Հարց է ծագում, ո՞ր է յերաշխիքը, վոր ներկայիս «բարձր ցեղի» ներկայացուցիչների հավակնութունները նույն վողրալի հետևանքներին չեն հանգի: Ի՞նչ յերաշխիք, վոր Ֆրանսիական — գրական քաղաքականների բեռնիում բախտն ալիքի կիծալա, քանի հին և վործված նախնուներինը Հռոմում: Ալիքի ճիշտ է՞ր լինի հակառակը յենթադրել:

Վերջապես չորրորդներն այն կարծիքին են, թե պատերազմը ԽՍՀՄ-ի դեմ պետք է կազմակերպել: Նրանք մտածում են ջախջախել ԽՍՀՄ, նրա տերրիտորիան բաժան-բաժան անել և ապրել նրա հաշվին: Սխալ կլինի յենթադրել, թե այդպես են մտածում Ճապոնիայի ռազմական միայն մի քանի շրջաններ: Մեզ հայտնի չէ, վոր այդպիսի ծրագրեր են սերվում և Յեվրոպայի մի քանի պետութունների քաղաքական գեկավարների շրջաններում: Յենթադրենք, թե այդ պարոնները խոսքից գործի լեն անցել: Ի՞նչ կարող է ստացվել դրանից: Հաղթի թե կարելի լինի կասկածել, վոր այդ պատերազմը բուրժուազիայի համար ամենալուսնադավոր պատերազմը կլինի: Այդ պատերազմը ամենա վտանգավորը կլինի վոչ միայն նրա համար, վոր ԽՍՀՄ ժողովուրդներն իրենց մինչև մահը կարաքարեն հեղափոխության նախնուների համար: Այդ պատերազմը բուրժուազիայի համար ամենալուսնադավորը կլինի նաև այն պատճառով, վոր այն տեղի կունենա վոչ միայն հակառակորդի թիկունքում: Բուրժուազիան կարող է չկասկածել, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգի բազմութիվ քարեկամները Յեվրոպայում և Ասիայում կաշխատեն իրենց ճեղղներին թիկունքին խլել, վորոնք վաճառաբոմ պատերազմ են սարքել բոլոր յերկրների բանվոր դասակարգի հայրենիքի դեմ: Յեվ թող մեզ չմեղադրեն պարոնայք բուրժուաները, յեթե նրանք այդպիսի պատերազմից հետո հետևյալ որը գոյութուն չունեցողների թվում գտնեն իրենց մտնիկ կառավարութուններից մի քանիսին, վորոնք այժմ բարեբաստիկ մերալով թագավորում են «աստու վողորմությամբ» (վորոտալից ծախալուք յունենք): ԽՍՀՄ իության դեմ մի այդպիսի պատերազմ

արդեն յեղել է, յեթե հիշում եք, տասն և հինգ տարի առաջ: Ինչպես հայտնի չե, բոլորին հարգելի Չերչիլն այն ժամանակ այդ պատերազմը ձեռնարկել է — «14 պետությունների արշավանք» բանաստեղծական Փորձության: Դուք հիշում եք, իհարկե, վոր այդ պատերազմը մեր յերկրի բոլոր աշխատավորներին անձնագործ ուղարկելների միասնական ճամբարի մեջ է համախմբել, վորոնք իրենց կրթքով պաշտպանել են իրենց բանվորագյուղացիական հայրենիքն արտաքին թշնամիներից: Դուք գիտեք, թե ինչով վերջացավ այդ պատերազմը: Վերջացավ այն մեր յերկրից ինտելիկտները խուլելով և Ֆեյրպայում հեղափոխական «գործողությունների կոմիտեների» ստեղծումով: Հաջիվ թե կարելի լինի կասկածել, վոր ԽՍՀՄ գեմ յերկրորդ պատերազմը հարձակվողների լիակատար պարտության, Ֆեյրպայայի և Ասիայի մի շարք յերկրներում հեղափոխության և այդ յերկրների բուրժուա — կալվածատիրական կառավարությունների ջախջախման կհանգի:

Այդ են բուրժուական քաղաքագետների խճճված ուղղման պլանները:

Ինչպես տեսնում եք, նրանք վոչ խելքով և վոչ ել քաջություններ չեն փայլում (ծափահարություններ):

Բայց յեթե բուրժուական պատերազմի ուղին է ընտրում, ապա կապիտալիստական յերկրների չորսամյա ճգնաժամի և շորձադրվության շնորհիվ հուսալքման հասած բանվոր դասակարգը հեղափոխության ուղին է բռնում: Դա նշանակում է, վոր հասունանում է և կհասունանա հեղափոխական ճգնաժամը: Յեմ հեղափոխական ճգնաժամը կաճի այնքան ավելի արագ, վորքան բուրժուական իր ուղղման կոմբինացիաներում կրխճճվի, վորքան ավելի հաճախ նա բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դեմ պայքարելու տերորիստական մեթոդներին կդիմի:


Ընկերներից վոմանք կարծում են, թե այնքան, վորքան տարադ տեղի ունենա հեղափոխական ճգնաժամը, բուրժուական պետք է անելանելի դրություն մեջ բնկնի, վոր նրա վախճանը ուրեմն հասել է, հետևարար, արդեն կանխորոշված է, վոր հենց դրանով ել հեղափոխության հաղթանակն արդեն ապահովված է և վոր իրենց մնում է միայն սպասել բուրժուական յանկմանը և հաղթական բանաձևեր դրել: Դա խորապես սխալ է: Հեղափոխության հաղթանակը յերբեք ինքն իրեն չի գալիս: Այդ հաղթանակը պետք է նախապատրաստել և նվաճել: Իսկ այն նախապատրաստել և նվաճել կարող է միայն ուժեղ, պրոլետարական հեղափոխական կուսակցությունը: Պատահում են զեպ-

քեր, յերբ դրությունը հեղափոխական է, բուրժուական իշխանությունը մինչև իր հիմքերը տատանվում է, աշխատանքային հեղափոխության հաղթանակը վրա չի հասնում, վորովհետեւ առկա պրոլետարիատի հեղափոխական կուսակցություն չկա, վորը բավականաչափ ուժեղ և հեղինակավոր լինի մասսաներին իր հետեից տանելու և իշխանություն ձեռք վերցնելու: Այն մասնություն կլինի կարծել, թե նման «դեպքեր» չեն կարող տեղի ունենալ:

Չեր խանդարի այս ինդրի առնչությամբ յերկրորդ կոնգրեսում հեղափոխական ճգնաժամի մասին Լենինի ասած իմաստուն խոսքերը հիշեցնել:

«Մենք մոտեցել ենք այժմ հեղափոխական ճգնաժամի, վորպես մեր հեղափոխական գործողության հիմունքի հարցին: Այստեղ ել պետք է, նախ և առաջ, նշել յերկու տարածված սխալ: Մի կողմից բուրժուական տնտեսագետներն այդ ճգնաժամը պատկերացնում են անդլիացիների նրբին արտահայտության միջոցով: «Անհանգստություն»: Մյուս կողմից, յերբեմն հեղափոխականներն աշխատում են ապացուցել, վոր ճգնաժամը բացարձակորեն անելանելի չէ: Դա սխալ է: Բացարձակորեն անելանելի դրություններ չեն լինում: Բուրժուական իրեն պահում է, ինչպես լիախացած և դուրսը կորցրած գիշատիչ, նա հիմարությունը հիմարության հետեից է կատարում՝ սրելով դրությունը, իր կործանումն արագացնելով: Այդ բոլորը այդպես է: Բայց չի կարելի «ապացուցել», թե բացարձակորեն վոչ մի հնարավորություն չկա, վոր չահագործվողների վորեւե փոքր մասնություն նա չքնեցներ այս ու այն, փոքրիկ ղեկողություններով, վոր ճնշվածների և շահագործվողների այս կամ այն մասի այս կամ այն շարժումն ու ապստամբությունը չճնշեր: Փորձել առաջուց «ապացուցելու» «բացարձակ» անելանելիությունը դատարկ բժանդրություն կլինի, կամ հասկացողությունների և բառերի խաղ: Այդ և նման հարցերում իսկական «ապացույց» կարող է միայն պրակտիկան լինել: Բուրժուական կարգերը ամբողջ աշխարհում մեծագույն հեղափոխական ճգնաժամ են ապրում: Հարկավոր է այժմ հեղափոխական կուսակցությունների պրակտիկայով «ապացուցել», վոր նրանք բավականաչափ գիտակցություն, կազմակերպվածություն, շահագործվող մասսաների հետ կապ, վճարվող համություն ունեն այդ

3356
90234
0101



ձգնաժամն ողտաղործելու հաջող, հաղթական հեղափոխութեան համար»։ (Լենին, 1920 թ. 25-րդ հատոր, յերես 340-341)։

3. ԽՍՀՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեշտ և հասկանալի, թե վորքան դժվար և յեղել խՍՀՄ համար ռազմական կոմբինացիաների վարչահոտութեամբ վարակված այդ միջոցորոտում իր խաղաղ քաղաքականութիւնը տանել։

Նախապատեւադման խնթապարի այդ պայմաններում, վորն ընդգրկել եր մի ամբողջ շարք յերկրներ, խՍՀՄ այդ տարիներում շարունակել և ամուր ու անասան կանգնած մնալ իր խաղաղութեան պաշտպանութեան դերքերի վրա, պայքարելով պատերազմի վտանգի դեմ, պայքարելով խաղաղութեան պահպանման համար, ընդառաջելով այն յերկրներին, վորոնք այսպես թե ահապես կոմնակից են խաղաղութեան պահպանմանը, մերկացնելով և պատռելով այն բոլորի դիմակը, ովքեր պատերազմ են նախապատրաստում, հորդորում։

Ի՞նչի վրա յե հույս դրել խՍՀՄ խաղաղութեան համար մըղ վող այդ դժվար և քարդ իր պայքարում։

ա) Իր աճող տնտեսական և քաղաքական հզորութեան վրա։
բ) Բոլոր այն յերկրների բանվոր դասակարգի միլիոնավոր մասնաների բարոյական պաշտպանութեան վրա, վորոնք խորապես շահագրգռված են խաղաղութեան պաշտպանութեամբ։

գ) Այն յերկրների վողջակոտութեան վրա, վորոնք այս կամ այն պատճառով շահագրգռված չեն խաղաղութեանը խախտելու մեջ և վորոնք ցանկանում են առեւտրական հարաբերութիւններ վարդացնել այնպիսի պարտաճանաչ պայմանակցի հետ, ինչպիսին և խՍՀՄ։

դ) Վերջապես մեր պանծալի բանակի վրա, վորը պատրաստ և պաշտպանել յերկիրը դրա հարձակումներից։

Այս հիման վրա յեւ առաջացավ չհարձակման պայմանագրի և հարձակվող կողմի բնորոշման հարեան պետութիւնների հետ միասին վորոշելու պայմանագրի կնքման մեր կամպանիան։ Դուք գիտեք, վոր այդ կամպանիան հաջողութիւն ունեցավ։ Ինչպես հայտնի յե չհարձակման պայմանագիր կնքված և վող միայն արեւմուտքում և հարաւում մեր հարեան պետութիւններից շատերի հետ, այդ թվում Ֆինլանդիայի և Լեհաստանի հետ, այլև այնպիսի յերկրների հետ, ինչպիսին են Ֆրանսիան և Իտալիան, իսկ հարձակվող կողմը բնորոշելը մեր հարեան պետութիւնների հետ, այս շարքում նաև Փոքր Անտանտան։

Այս հիման վրա յեւ հենց ամբացել և խՍՀՄ և Թյուրքիայի յարեկամութիւնը, լավացել են հարաբերութիւնները և անվիճելի բավարար են խՍՀՄ և Իտալիայի միջև, լավացել են հարեութիւնները Ֆրանսիայի, Լեհաստանի և մյուս Բալթիկ պետութիւնների հետ, վերահանգնվել են հարաբերութիւնները ՀԱՄՆ, Զինաստանի հետ և այլն։

ԽՍՀՄ խաղաղութեան քաղաքականութեան հաջողութիւններն արտացոլող մի շարք փաստերից անհրաժեշտ և նշել և առանձնացնել յերկու փաստ, վորոնք անկասկած լուրջ նշանակութիւն ունեն։

Ի. Յեւ նկատի ունեմ, առաջինը, դեպի լավն այն բեկումը, խՍՀՄ և Լեհաստանի, խՍՀՄ և Ֆրանսիայի միջև, վորը տեղի յե ունեցել վերջին ժամանակներս։ Անցյալում, ինչպես հայտնի յե, Լեհաստանի հետ մենք լավ հարաբերութիւնների մեջ չէինք։ Լեհաստանում սպանում էին մեր պետութեան ներկայացուցիչներին։ Լեհաստանն իրեն արեւմտյան պետութիւնների բարբարոս էր համարում խՍՀՄ դեմ։ Լեհաստանի վրա հույսեր և յինգնում բոլոր ու ամեն տեսակի խմբերի խախտները, իրեւ առաջավոր ջոկատ՝ խՍՀՄ վրա ռազմական հարձակում դործելու դեպքում։ Ավելի լավ չեւ խՍՀՄ և Ֆրանսիայի միջև հարաբերութիւնների վորո՞ք։

ԽՍՀՄ և Ֆրանսիայի փոխհարաբերութեան պատկերը հիշողութեան մեջ վեւ րականգնելու համար, բավական և հիշել Մոսկովայում Թամզինի վնասաբարական խմբակի վրա կազմակերպված դատի պատմութեան փաստերը։ Յեւ ահա այդ անհաճելի հարաբերութիւններն սկիւսում են հետզհետե վերանալ։ Նրանք փոխարինվում են ուրիշ հարաբերութիւններով, վորոնց ուրիշ անուն տալ չիկարելի, քան մերձեցման հարաբերութիւններ։ Բանը միայն նրա մեջ չեւ, վոր մենք այդ յերկրների հետ չհարձակման պայմանագիր ենք կնքել, թեև ինքը պայմանագիրը շատ լուրջ նշանակութիւն ունի։ Բանն առաջին հերթին նրանումն և, վոր փոխադարձ անխտաճութեամբ վարակված միջոցորտն սկսում և ցրվել։ Այս չի նշանակում, իհարկե, վոր մերձեցման նշված պրոցեսը կարելի յե ընդունել, իր լեւ բախականաչափ կարուն, դործի վերջնական հաջողութիւնն ապահովող պրոցես։ Բաղաքականութեան մեջ անակնկալներն ու պիզդաղները, որինակ, Լեհաստանում, վորտեղ հակախորհրդային տրամադրութիւնները դեռ ուժեղ են, բոլորովին զեռ չի կարելի վերացված համարել։ Բայց բեկումը դեպի լավը մեր հարաբե-

բությունների մեջ, անկախ ապագայում նրա արդյունքներից — փաստ է, վորն արժանի չէ, վորպեսզի նշենք և առաջ քաշենք նրան իբրև խաղաղության դործի լավացման դործոն:

Վերահ^ոգ է այս բեկման պատճառը, ինչո^ւ վ է նա պայմանա վորվում:

Առաջին հերթին իՍՀՄ հզորության և ուժի աճումով: Մեր ժամանակներում ընդունված չի թույլների հետ հաշվի նստելը: Հաշվի չեն նստում միայն ուժեղների հետ: Իսկ այնուհետև — Գերմանիայի քաղաքականության մեջ վորոշ փոփոխություններով, վորոնք Գերմանիայում ունեցել և խմբերիալիստական տրամադրությունների աճումն են արտացոլում:

Գերմանական վորոշ քաղաքականներ այդ մասին տալով են, թե իՍՀՄ կողմնորոշվում է այժմ դեպի Ֆրանսիան ու Լեհաստանը, թե Վերսալի պայմանագրի թշնամի լինելուց նա դառել է նրա կողմնակիցը, վոր այդ փոփոխությունը բացատրվում է Գերմանիայում Ֆաշիստական ուժի սահմանվելով: Դա ճիշտ չէ: Իհարկե, մենք հռու չենք Գերմանիայի ուժի մով հիանալուց: Բայց բանն այստեղ Ֆաշիզմի մեջ չէ, թեկուզ հենց նրա համար, վոր Ֆաշիզմը, որինակ Խոսիայում չխանգարեց իՍՀՄ այս յերկրի հետ ամենալավ հարաբերություններ սահմանելուն: Գործը և Վերսալի պայմանագրի նկատմամբ մեր վերաբերմունքի չեղյալ փոփոխություն մասին ել չէ: Մենք չենք, վոր պետք է գովերգենք Վերսալի պայմանագիրը, քանի ինքներս պատկեր ենք Բրեստի հաշտություն խախտողությունը: Մենք համաձայն չենք միայն այն բանի հետ, վոր այդ պայմանագրերի համար խաղաղությունը նետվի նոր պատերազմի անդունդը: Նույն բանը պետք է ասել և իՍՀՄ որիննտացիա կարծեցյալ փոփոխություն մասին: Մեզ մոտ որիննտացիա չկար դեպի Գերմանիան, նույնպես և մենք որիննտացիա չունենք դեպի Լեհաստանն ու Ֆրանսիան: Մենք անցյալում դիրքորոշվել ու ներկայումս դիրքորոշվում ենք իՍՀՄ-ի և միայն իՍՀՄ վրա: (Բուռն ծափահարություններ): Յեւ յեթե իՍՀՄ չահերը պահանջում են մերձեցալ այս կամ այն յերկրներին, վորոնք չահադրդրված չեն խախտել խաղաղությունը, ապա մենք այդ բանն տնում ենք առանց տատանվելու:

Վոչ, բանը դրանում չէ: Բանը Գերմանիայի կողմից քաղաքականություն փոփոխություն մեջ է: Բանը նրանումն է, վոր դեռ գերմանական ներկա քաղաքականների իշխանության դուրս անցնելը, մանավանդ նրանց իշխանության դուրսն անցնելուց հետո, Գերմանիայում սկսվել է պայքար յերկու քաղաքական դժերի միջև, հին քաղաքականության, վորն իր արտա-

ցոլումն է դուել իՍՀՄ և Գերմանիայի միջև կնքված հայտնի պայմանագրերում և «նոր» քաղաքականության միջև, վորը հիմնականում հիշեցնում է գերմանական նախկին կայսերի քաղաքականությունը, վորը մի ժամանակ գրավեց Ուկրաինան ու արշավանք կազմակերպեց Լեհիստանի դեմ, մերձալթյան յերկրները գարձնելով այդ արշավանքի համար ուղղադատ, ուր «նոր» քաղաքականությունը գերազանցում է հին: Չի կարելի պատահականություն համարել, վոր «նոր» քաղաքականության մարդիկ ամեն ինչում գերակշռում են, իսկ հին քաղաքականություն կողմնակիցները յենթարկվում են հալածանքի ու հաշվի չեն տնելում: Պատահական չէ և Հուգենբերգի հայտնի յերկու թեր Լոնդոնում, պատահական չեն նաև Ռոդենբերգի—Գերմանիայի տիրող կուսակցության արտաքին քաղաքականության գեկալարի վոչ պակաս հայտնի գեկլարացիաները: Ահա թե բանն ինչումն է, բեկերներ:

2: Յես նկատի ունեմ յերկրորդը՝ իՍՀՄ և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև նորմալ հարաբերությունների վերականգնումը: Կասկած չի կարող լինել, վոր այդ ակար յուրջ նշանակություն ունի միջազգային հարաբերությունների ամբողջ սիտեմում: Խնդիրն այն չէ միայն, վոր նա բարձրացնում է խաղաղության պահպանման շանսերը, բարելավում է յերկու յերկրների միջև փոխհարաբերությունը, ամրապնդում է առևտրական հարաբերությունը նրանց միջև և փոխադարձ համադրեցություն բաղա ստեղծում: Բանը նրանումն է, վոր պա ուսման է դնում հին ժամանակների, յերբ ՀԱՄՆ-ը տարեր յերկրներում համարվում եր ամեն տեսակի հակախորհրդային տենդենցների հենարանը և նորի միջև, յերբ այդ հենարանն ինքնակամ վերացված է ճանապարհից հողուտ յերկու յերկրներին:

Այդպես են յերկու հիմնական տկտերը, վորոնք արտահայտում են խորհրդային խաղաղասիրական քաղաքականության հաջողությունները:

Այնուամենայնիվ սխալ կլիներ մտածել, վոր հաշվետու շրջանում մեզ մոտ ամեն ինչ հարթ է գնացել: Վոչ, ամեն ինչ մեզ մոտ հարթ չի յեղել:

Հիշեցեք դոնե Անգլիայի կողմից յեղած ճնշումը, մեր արտահաման վրա դրված եմբարգոն (արգելք), մեր ներքին դործերին խառնվելու փորձերը և այդ բանում շուշափելով մեզ փորձել մեր դիմադրական ուժերը: Ծիշա է, այդ փորձից վոչին: Գուրս չեկալ և հետագայում եմբարգոն վերացվեց, բայց այդ հարձակումների անախորժ մնացորդը դեռևս իրեն պատկերում է այս ամենում, ինչ վերաբերվում է Անգլիայի և իՍՀՄ

հարաբերութիւններին, այդ թելում նաև առեւտրական պայմանագրի մասին տեղի ունեցած բանակցութիւններում: Իսկ ԽՍՀՄ խութիւն վրա այդ հարձակումները պատահականութիւն համարել չի կարելի: Հայտնի չէ, վոր անդլիական կոնսերւատորները մի մասը չի կարողացել առանց նման հարձակումների: Յեւ չհենց այդ պատճառով է, վոր այդ հարձակումները պատահական չեն, մենք պետք է հաշիւ առնենք, վոր հետագայում ել ԽՍՀՄ վրա հանկարծակի հարձակումները, նրա համար ամեն տեսակի վտանգ կտեսղծեն, վնասներ կհասցնեն և սղին:

Չի կարելի նկատի չառնել նույնպես ԽՍՀՄ և ծապոնիայի միջև յեղած հարաբերութիւնները, վորոնք կարիք ունեն լուրջ բարելավման: Ծապոնիայի հրաժարումը Հարձակման պայմանագիր ստորագրելուց, վորի կարիքը ծապոնիան պակաս չի զգում, քան ԽՍՀՄ, մի աղելուդ անգամ բնդգծում է, վոր մեր հարաբերութիւնները բնագոյաբար ամեն ինչ բարեկարգ չէ: Նույնը պետք է ասել Չին - Արեւելյան յերկաթուղու շուրջը տարւոյ բանակցութիւնների բնդհատման մասին, վորը կատարւեց վոյ ԽՍՀՄ հանցանքով, նույնպես և այն մասին, վոր ծապոնական գործակալներն անթույլատրելի բաներ են անում Չին - Արեւելյան յերկաթուղու վրա, ապրիլի կերպով ձերբակալում են խորհրդային ծառայողներին և այլն: Յես այդ չեմ խոսում այն մասին, վոր Ծապոնիայի զինվորական մարդկանց մի մասը մամուլի մեջ բացահայտ քարոզում է ԽՍՀՄ դեմ պատերազմելու և Մերձծովյան չրջանի գրավման անհրաժեշտութիւնը, զինվորականների մյուս մասի հայտնարար համալուծամբ, ծապոնիայի կառավարութիւնն ել փոխանակ պատերազմի հրձիգներին կարգի հրավերելու՝ ձեացնում է, թե այդ բանն իրեն չի վերաբերում: Դժվար չէ հասկանալ, վոր նման պայմանները չեն կարող չտեսղծել անհանգստութիւն և անպատահութիւն մթնոլորտ: Իհարկէ, մենք այսուհետեւ ել համադրեն տանելու յենք խաղաղութիւնը քաղաքականութիւն և աշխատելու յենք բարելավելու հարաբերութիւնները Ծապոնիայի հետ, վորովհետեւ մենք ցանկանում ենք բարելավել այդ հարաբերութիւնները: Բայց այստեղ բոլորն ել մեզնեց չի կախված: Ուստի մենք պետք է դրա հետ միասին բոլոր միջոցները ձեռք առնենք, վորպեսզի մեր յերկիրն ապահովենք անակնկալներից և պատրաստ յիննք նրան պաշտպանելու հարձակումից (բուռն ծափահարութիւններ):

Ինչպես տեսնում եք, մեր խաղաղութիւնը քաղաքականութիւն հաջողութիւնները հետ միասին մենք ունենք նաև մի շարք բացասական յերեւոյթներ:

Այդ է ԽՍՀՄ արտաքին դրութիւնը:

Մեր արտաքին քաղաքականութիւնը պարզ է: Նա խաղաղութիւն պահպանելու և բոլոր յերկրների հետ առեւտրական հարաբերութիւններն ուժեղացնելու քաղաքականութիւն է: ԽՍՀՄ չի մտածում վորեւէ մեկին պառնալու, առաւել ևս վորեւէ մեկի վրա հարձակելու: Մենք խաղաղութիւն կողմնակից ենք և պաշտպանում ենք խաղաղութիւն գործը: Բայց մենք չենք վախենում պառնալիքներից և պատրաստ ենք պատերազմի հրձիգների հարվածներին հարվածներով պատասխանել (բուռն ծափահարութիւններ): Ով խաղաղութիւն է ձգտում և ուղում է մեզ հետ գործնական կապեր ունենալ, նա միշտ մեր աջակցութիւնը կգտնի: Իսկ նրանք, ովքեր կիրորձեն հարձակել մեր յերկրի վրա, ջախջախիչ հակահարված կստանան, վորպեսզի այնուհետեւ ախորժակ չունենան իրենց խոզի մոռելը ներս խոթելու մեր խորհրդային բանջարանոցը (ծափերի վորոտ):

Այսպես է մեր արտաքին քաղաքականութիւնը (ծափերի վորոտ):

Խնդիրը կայանում է նրանում, վոր այսուհետեւ ել կենսագործենք այդ քաղաքականութիւնն ամենայն հաստատակամութիւն և հետեղականութիւնով:

II.

ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսությունը Շարունակվող վերելքի ֆեզ ներքին Գրություններ

Անցնում եմ ԽՍՀՄ ներքին գրության հարցերին:

ԽՍՀՄ ներքին գրության տեսակետից հաշվետու ժամանակաշրջանը ներկայացնում է ավելի ու ավելի ծավալվող վերելքի պատկեր՝ թե ժողովրդական տնտեսության ասպարիզում և թե կուլտուրայի ասպարիզում:

Այդ վերելքն ուժերի հասարակ քանակական կուտակում է չի չեղել: Այդ վերելքը նշանակալից է նրանով, վոր սկզբունքային փոփոխություններ և մտքերը ԽՍՀՄ կառուցվածքի մեջ և արմատապես փոխել է յերկրի դեմքը:

